

թէ Սիրոնի Ս. Ստեփանոսի վանքը, հին դարերէ սկսեալ, հայկական սեպհականութիւն մը եղած է: Նոյն վանքի ընդարձակ տւերակը, որ գոյութիւն ունի այսօր և կը գտնուի մեր Ս. Հրեշտակապետ վանքին դիմաց, ճանապարհով մը զատուած, և Դաւթի դրան մօտիկ, Հայոց անհերքելի սեպհականութիւնը, և թէ ԺԴ. դարու ձեռագիր Ճաշոցի մը յիշատակարանը, զոր ստորեւ պիտի պարզենք, բացայայտ կ'ապացուցանեն նոյն վանքին ազգային սրբավայր մը ըլլալը: Ո՛րքան որ Ս. Ստեփանոս վանքին հայկական հաստատութիւն մը ըլլալուն ծագումը մօտ է, բայց մենք պիտի ջանանք, ստուգութեան մօտ հաւանականութեամբ մը, մէջ բերել մեր ապացոյցները և յետոյ տւելցնել ա՛յն բացորոշ յիշատակարանը, զոր ունինք: Ինչպէս որ վերեւ յառաջ բերուած օտար ուղեգիրներու վկայութիւններէն յայտնի եղաւ, Ս. Ստեփանոսի մատուոյ Մայր Սիրոնի վերնատան եկեղեցիէն անջատուած էր Ը. դարու վերջերը, և ստուգութեան մօտ հաւանականութիւն մ'է որ Հայոց Ս. Ստեփանոսի վանքը, Սիրոնի մէջ, վերահաստատուած էր է. դարու վերջերը, կամ Ը.ի սկիզբը: Ինչպէս ծանօթ է, Հայոց Անաստաս վարդապետը, Ը. դարուն, կազմած էր Երուսաղէմի Ազգ. Վանօրէից Ցուցակը, որուն մէջ յիշուած վանքերը կ'անուանակոչուին ո՛չ թէ վանքերուն բուն իսկ անուններով, այլ նոյն վանքերը չինող կամ մատակարարող նախարարութեանց կամ Հայ արքունիքի անուններով: Նոյն Ցուցակին մէջ կը կարդանք հետեւեալը.

«Անասունեաց վանքն Ս. Սիրոնի կողմն Է».

«Այլ վանք Անասունեաց, որ հաւատարմքն բնակիին ի կողմն Սիրոնի»:

Ամատունի նախարարութիւնն է որ Սիրոնի մէջ կը շինէ կամ շինել կու տայ երկու վանք, որոց երկրորդը հաւատաւոր կանանց բնակութեան յատկացուած է: Ծանօթ ըլլալով որ հին ժամանակներէ սկսեալ, հաւատաւոր հայ կանայք կը բնակէին Սիրոնի մեր Ս. Հրեշտակապետ վանքին մէջ, որ բնաւ տարակոյս չի վերցներ, և միւս կողմէն, նոյն վանքին շատ մօտ, հանգիստ կաց կողմը, կը գտնուէր Ս. Ստեփանոսի վանքը, ինչպէս կը յիշուի ստորեւ մէջ բերուելիք յիշատակարանին մէջ, և արդէն նոյն դիրքը ունի Ս. Ստեփանոսի վանքի այժմու աւերակը. Կ'եզրակացնենք թէ Ամատունեաց անուամբ յիշուած երկու